ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2025 թվականի N 546-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2025 թվականի մարտի 28-ին ժամը 10:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-25) թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

2. 2025 թվականի մարտի 28-ին ժամը 11:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-43) թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

3.Աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի ՓԵՏՐՎԱՐԻ 26
ք.Մեծամոր

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման
նույնականացման համարն է **1624229**:
Տպեք կամ պահպանեք այն:

3.2-43